# Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ըմպելու ջրի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08 նոյեմբերի 2018 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մարիանա Դուրգարյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Գայանե Օսիպյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

## Օրակարգ

**ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/4 ծածկագրով գնման հայտերի բացման և ուսումնասիրման մասին**

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մարիանա Դուրգարյանը նիստը հայտարարեց բացված: Սահմանված ժամկետում 2-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, իսկ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Նախահաշվային գներ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| | «Էվրի Դեյ» ՓԲԸ | |
| | ԱԱՀ վճարող | |
| **1** | **541 666.67** | **600 000** |
| **3** | **31666.67** | **42 750** |

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկից, որն ավելի բարձր է նախահաշվային գնից ու այդ պատճառով մերժվել է համակարգի կողմից:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

**- «Էվրի Դեյ» ՓԲԸ–ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 3-րդ չափաբաժնի մասով:**
**- Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:**

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/4 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողովի

Նախագահի _______________ Մարիանա Դուրգարյան

Անդամներ՝ _______________ Ջուլիետա Բաբայան

_______________ Գայանե Օհսյան

քարտուղար _______________ Սպարտակ Հարությունյան